

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ապա հարց տանք, թե ի՞նչ է **բարոյականությունը**:

Բարոյականությունը (լատ.՝ mores, moralitas, անգլ.՝ Morals, Morality, գերմ.՝ Moral, Moralität) բարոյագիտության ուսումնասիրության առարկան է. ան դրությունն է բարոյական արժեքներու եւ կանոններու (նորմերու) եւ անոնց իրականացումը՝ առօրեայ կեանքին մէջ. ան սերտօրէն առնչուած է վարմունքին ու վարուելակերպին հետ եւ կ'եզրակացուի *բարոյական վարմունք* կամ *բարոյական վարուելակերպ* բացատրութեամբ:

Վարմունքը կամ վարուելակերպը կարելի է դատել առարկայական տեսանկիւնէն եւ գնահատել՝ որպէս *ճիշդ* կամ *սխալ*: Վարմունքը կամ վարուելակերպը կարելի է դատել նաեւ բարոյական տեսանկիւնէն եւ գնահատել՝ որպէս *լաւ* ու *բարի* կամ *վատ* ու *չար*: **Առարկայական** տեսանկիւնէն դիտուած, վարմունք մը պէտք է համապատասխանէ իր նպատակին, որուն համար կը կատարուի: Օրինակ եթէ տուն մը պիտի կառուցեմ, պէտք է որոշ կանոններու համաձայն կառուցեմ: Իսկ **բարոյական** տեսանկիւնէն դիտուած, վարմունք մը պէտք է համապատասխանէ ոչ միայն վարուող անհատի հետաքրքրութեան եւ ծառայէ իր նպատակին, այլ նաեւ պէտք է նկատի առնուին վարմունքին հետ առնչութիւն ունեցող այլ անհատները: Օրինակ անհատի մը վարմունքը ի՞նչ բացասական ազդեցութիւն կրնայ ունենալ այլ անհատներու վրայ: Վարմունքի մը պարագային, դատողութեան մեր առարկայական մօտեցումը ենթադրական կամ պայմանական է. իսկ բարոյական տեսանկիւնէն դիտուած, ան անպայմանական է:

Ճնադարեան (Անտիկ) յունական ժամանակաշրջանին, յոյն փիլիսոփաները կ'անկարկէին *բարիին* ու *արդարին*, երբ կը խօսուէր *Էթոսի* (*ethos*) մասին, որ սակայն ունէր երկու իմաստներ: *Էթոս* (յուն.՝ êthos, երկար Է-ով = η - Eta) կը նշանակէ «անձնական նկարագրի յատկանիշ», իսկ *Էթոս* (յուն.՝ êthos, կարճ Է-ով = ε - Epsilon) կը նշանակէ «անհատի սովորութիւն», որ առնչուած է շրջապատին ու ընկերութեան: *Էթոս* բառէն յառաջացաւ յունարէն **Էթիկէ** (յուն.՝ êthikê, ἠθικη), որ Արիստոտելի հիմնադրած փիլիսոփայական մէկ ճիւղն է՝ **բարոյագիտությունը** (Էթիկա, անգլ.՝ Ethics, գերմ.՝ Ethik):

Իսկ լատիներէն *մորէսը* (*mores*), որ համազօր էր յունարէն Էթոսին (*êthos*, կարճ Է-ով), ժամանակի ընթացքին, բարոյական արժեքներու ճանաչման ու իրագործման ոլորտներու մէջ, անելի գործնական իմաստ ստացաւ եւ դարձաւ՝ **բարոյականութիւն** (մորալ, անգլ.՝ Morals, գերմ.՝ Moral):

Բարոյականությունը մարդկային բնութեան մէջ գոյութիւն ունեցող յատկութիւն մըն է: Այլ խօսքով, ան կը պատկանի մարդաբանութեան (*Anthropology*), որ որպէս փիլիսոփայական ճիւղ զարգացաւ 20-րդ դարու առաջին կիսուն, նախ Գերմանիոյ մէջ ապա այլուր (տե՛ս Էջ 109): Բարոյականութեան վրայ հիմնուած մարդաբանությունը կը հաստատէ, որ մարդը (յուն.՝ ἀνθρώπος), կենսաբանական որոշ յատկանիշներու բերումով, *բարոյական բանական*